ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը տարրական դասավանդման մեթոդիկա առարկայի ուսուցման գործընթացում»

ԱՌԱՐԿԱ՝ Տարրական դասարանների ուսուցիչ

ՀԵՂԻՆԱԿ՝ Սոնա Խառատյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սիսիանի հ. 5 հիմնական դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննիսյան

2023

Ներածություն

Թեմայի արդիականությունը - Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»:

Միջառարկայական կապերն ազդում են ուսումնական առարկաների բովանդակության և կառուցվածքի վրա: Յուրաքանչյուր ուսումնական առարկա հարակից առարկաների համար միջառարկայական այս կամ այն տեսակի կապերի աղբյուր է: «Միջառարկայական կապերը կարելի է դիտարկել որպես 4 առարկայական ուսուցման համակարգի անհրաժեշտ տարր, քանի որ առարկաները և նրանց հարաբերությունները չեն կարող հակադրվել միմյանց: Միջառարկայական կապերը որպես մանկավարժական հիմնախնդիր Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունները հանգեցրել են կրթական համակարգի արմատական նորացման անհրաժեշտության: Աշխարհում տեղի ունեցող արագ փոփոխությունների ֆոնին Հայաստանի Հանրապետության զարգացման ներկա փուլում կրթության արդիականացումը դառնում է հասարակության տնտեսական և սոցիալական առաջընթացի անհրաժեշտ գործոններից մեկը: Կրթական քաղաքականության գլխավոր խնդիրը հասարակության և պետության ժամանակակից պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովումն է: Կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները չեն կարող չազդել կրթական գործընթացի վրա, որին ներկայացվող պահանջներից են ստացած գիտելիքի գիտակցվածությունն ու կիրառելիությունը: Ժամանակակից հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրը համընդհանուր գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների ամբողջական համակարգի ձևավորումն է դպրոցականի, շրջանավարտի, ավագ դպրոցականի մոտ, ինչը հնարավոր չէ իրականացնել ուսուցման գործընթացում առանց

միջառարկայական կապերի հաստատման: Հասարակությունը մարդու նկատմամբ առաջ է քաշում և ներկայացնում շատ նոր պահանջներ, առաջին հերթին մշտական ինքնակրթության, մտավոր զարգացման, մտածելու և ստեղծագործելու ունակության պահանջ, համեմատելու, քննադատաբար խնդրին մոտենալու, վերլուծելու, արժևորելու կարողություններ: «Այս հատկանիշներից շատերը կարելի է զարգացնել՝ դպրոցներում ավելացնելով տարբեր հիմնարար առարկաների միջառարկայական, ներառարկայական ու վերառարկայական կապերը, ներդնելով ինտեգրված դասեր, օգտագործելով համակարգչային տեխնոլոգիաներ, առաջնային դարձնելով մանկավարժի ցանկությունը՝ երեխային սովորեցնել աշխարհը տեսնել ամբողջական, այլ ոչ թե առանձին տեղեկությունների և պատկերացումների մասնատված, որոնք միմյանց հետ չմիավորվելով, ժամանակի ընթացքում հեշտությամբ մոռացվում են և չեն նպաստում շրջակա իրականության իրական պատկերը ստեղծելու կարևոր գործին: Անհրաժեշտ է փնտրել նորարարական միջոցներ և ուսուցման մեթոդներ: Դպրոցականի կրթության որակի, ուսումնառության մակարդակի 5 բարելավման եղանակների որոնումը նպատակահարմար է իրականացնել ինտեգրված միջառարկայական կապերի զարգացման ոլորտում»: Ժամանակակից կյանքի պայմաններում ուսուցիչը կրթական գործընթացում ստացել է ստեղծագործական լայն հնարավորություններ, մեթոդների, ուսուցման հնարների ակտիվ որոնման ազատություն: Կրթության բարեփոխումների առաջնային խնդիրներից մեկը սովորողների իմացական ակտիվության ու շահագրգռվածության բարձր մակարդակի ապահովումն է: Տարբեր գիտություններ միևնույն օբյեկտը տարբեր տեսանկյուններից դիտարկելու ընդհանուր եզրեր ունեն: Միջառարկայական կապերի հաստատման նպատակն է ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ այն նպաստի բնության օրենքների մասին սովորողների գիտական պատկերացումներն ամբողջական համակարգի մեջ տեսնելու կարողությունների ձևավորմանը: Միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս ստեղծել միասնական, ինտեգրված դասեր, որոնց ժամանակ երեխաներն աշխատում են հեշտությամբ և հետաքրքրությամբ՝ արդյունքում յուրացնելով մեծ ծավալով օգտակար նյութեր, ձեռք բերելով գիտակցված գիտելիքներ և ձևավորելով համադրելու, ընդհանրացնելու կարողություններ: Կարևոր է նաև այն, որ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կիրառվում են դպրոցականների կողմից իրենց գործունեության մեջ ոչ միայն ստանդարտ ուսումնական իրավիճակներում, այլև անծանոթ իրավիճակում ստեղծագործական դրսևորումների, գործնական գիտելիքի, մտավոր ունակությունների դրսևորման ժամանակ:

Դպրոցական պրակտիկայից հայտնի է, որ այն հարցերը, որոնք պահանջում են անսովոր կողմից որևէ բան դիտարկել, հաճախ երեխաներին փակուղու մեջ են դնում, և դա հասկանալի է, քանի որ նրանց դա չեն սովորեցրել: Իհարկե, ինչ-որ բան նորովի տեսնելը, և ոչ այնպես, ինչպես նախկինում տեսել ես, հեշտ խնդիր չէ: Բայց դա կարելի է սովորել այն դեպքում, երբ ուսուցման գործընթացը կազմակերպվում է սովորողների ինքնուրույն գործունեությունը, ստեղծագործական ունակությունները խթանելու, զարգացնելու բազմատեսակ հնարավորություններ ստեղծելու միջոցով:

Միջառարկայական կապերը կարող են զգալիորեն բարձրացնել ուսուցման և դաստիարակության արդյունավետությունը, եթե դրանք ներառվեն արտադպրոցական գործունեության տարբեր ձևերի և բովանդակության մեջ: Միջառարկայական կապերում հսկայական կրթական հնարավորություններ կան աշակերտների աշխարհայացքի ձևավորման, բարոյական որակների, գեղագիտական ապրումների զարգացման համար: Ուսուցման գործընթացի բարելավման խնդիրը միշտ արդիական է ցանկացած ակադեմիական առարկայի ուսուցչի համար: Անհրաժեշտ է, որ վերապատրաստումը միշտ համապատասխանի հասարակության սոցիալական կարգին, որի փոփոխությունը կապված գիտության, տեխնիկայի և արտադրության զարգացման հետ, պետք է հաշվի առնել վերապատրաստման տեսության և մեթոդաբանության մեջ: Միջառարկայական մոտեցումը լուծում է կրթության առարկայական համակարգում առկա հակասությունը առարկաներում ցրված աշակերտների կողմից գիտելիքների յուրացման և դրանց սինթեզի, գործնականում, աշխատանքի և մարդու կյանքում ինտեգրված կիրառման անհրաժեշտության միջև: Գիտելիքը ինտեգրված կերպով կիրառելու, այն սինթեզելու, գաղափարներն ու մեթոդները մի գիտությունից մյուսը փոխանցելու կարողությունը հիմնված է գիտական և տեխնոլոգիական առաջընթացի ժամանակակից պայմաններում մարդու գործունեության ստեղծագործական մոտեցման հիմքում: Նման հմտություններով զինվելը միջնակարգ և բարձրագույն կրթության հրատապ խնդիր է, որը թելադրված է գիտության մեջ ինտեգրման միտումներով և լուծվում միջառարկայական մոտեցման միջոցով:

Հետազոտական խնդիր - Ուսումնասիրել դասավանդման գործընթացի կազմակերպման պայմանները, որոնք ապահովում են աշակերտների՝ տարբեր առարկաների հետ միջառարկայական կապեր հաստատելուն :

Ուսումնասիրության նպատակը - Միջառարկայական մոտեցման հիման վրա աշակերտների համար դասաժամերին դասավանդման արդյունավետության բարձրացման գիտական հիմնավորումը:

Հետազոտության առարկան - Միջառարկայական կապերը դասաժամերին, որպես սովորողների ուսուցումը և դաստիարակությունը խթանող միջոց:

Հետազոտության վարկած - Եթե դասընթացի բովանդակության ձևավորումը հիմնված է միջառարկայական մոտեցման և համապատասխանաբար կառուցվածքի վրա, ապա դա կբարելավի աշակերտների կրթության և դաստիարակության մակարդակը:

Հետազոտության նպատակները - Հիմնվելով մեթոդական, մանկավարժական և հոգեբանական գրականության վերլուծության վրա՝ հիմնավորել դասավանդման արդիականությունը: Աշակերտների համար ուսուցման ոլորտներում միջառարկայական մոտեցման հիման վրա, մշակել դասընթացի բովանդակությունը:

Առաջադրված խնդիրները լուծելիս օգտագործվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝ հետազոտական խնդրի վերաբերյալ հոգեբանական, մանկավարժական և մեթոդական գրականության վերլուծությունների արդյունքների դիտարկումը:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը - Աշխատանքը բաղկացած է տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, բուն նյութից, եզրակացությունից,դասի պլանի նմուշ օրինակներից, օգտագործված գրականության ցանկից:

Միջառարկայական կապերի դերը մայրենիի դասերին

Ուսումնական աշխատանքում ամեն մի միջոցառում իր որոշակի տեղն ու դերը պետք է ունենա և՛ ժամանակի, և՛ գործադրության տեղի և՛ ձևի առումով, այլապես այն կդառնա ինքնանպատակ, օրգանապես չի ձուլվի ընդհանուր պրոցեսի հետ, չի դառնա նրա կայուն բաղադրիչը: Այդ տեսակետից միջառարկայական կապերի անցկացումը ևս բացառություն չի կազմում, այն ևս իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր կոնկրետ նյութի ուսումնասիրության պրոցեսում: Դասի պրոցեսում կամ նյութի ուսումնասիրության ընթացքում միջառարկայական կապերը կարող են օգտագործվել երեք տարբեր պահերի՝ նայած անհրաժեշտությանը և նյութի բնույթին: Այսպես՝ ուսումնասիրվող նյութի ընդհանուր թեմայի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել ուսումնական այլ առարկաների ու այլ գիտությունների տվյալները թեմայի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում տալու, ավելի ընդհանրացված հասկացություն ձևավորելու համար, որպեսզի դրանով իսկ հող ստեղծի բուն նյութի յուրացման համար:

Ի՞նչ նշանակություն և դեր ունեն միջառարկայական կապերի օգտագործումը մայրենիի դասերին. . . թերևս այս հարցի պատասխանը տվել է Ա. Տեր- Գրիգորյանը իր <<Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին>> գրքում: Նա նշում է,որ ուսուցման տարրական օղակում մայրենի լեզուն իր մեջ ամփոփում է գրեթե բոլոր աշխարհաճանաչողական տեղեկություններն ու գիտելիքները և հանդիսանում է դրանց փոխանցման ամենահիմնական միջոցը: Ուսուցման այս օղակում ոչ միայն դրվում են բոլոր գիտելիքների հիմքերը, այլև ձևավորվում են բոլոր կարևոր ու մարդու համար կենսականորեն անհրաժեշտ կարողությունները: Գիտելիքների ձեռքբերումը և

կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկի մյուսի համար հիմք է հանդիսանում: Հետևաբար, երեխաներին շրջապատող աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, արդեն ունեցած կամ մինչ այդ տարբեր ճանապարհներով ձեռք բերված գիտելիքների վերհիշումը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռորոշ նշանակություն ունեն երեխաների աշխարհաճանաչողության սահմանների ընդարձակման,դրանց հիման վրա կարողությունների ձևավորման համար: Առանձնապես ցանկանում ենք նշել միջառարկայական

կապերի օգտագործման դերը աշակերտների աշխարհայացքի, մտածողության և ընդհանրապես աշխարհընկալման ձևավորման գործում: Տարբեր առարկաներից ստացած գիտելիքների ու տեղեկությունների միջև տրամաբանական կապերի ստեղծումով նպաստում ենք երեխաների դիալեկտիկական մտածողության ձևավորմանը,ինչպես նաև ձևավորվում է մտածող ու խորհող անձնավորություն: Միջառարկայական կապերի օգտագործումը այդ տեսակետից մեծ հնարավորություններ է ընձեռում, և ուսուցիչը պետք է կարողանա ուսուցողական այդ հնարավորությունները տեղին ու ճիշտ օգտագործել:

Ա. Տեր-Գրիգորյանը իր <<Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին>> գրքում նշում է տարրական օղակում մայրենի լեզվի դասերին միջառարկայական կապերի գործադրման երեք կարևոր ձևեր կամ եղանակներ. այդ երեք ձևերից առաջինը ուսուցման պրոցեսում անդրադարձ կապերի օգտագործումն է, որն ամենից առաջ կապվում է ներառարկայական կապերի ճիշտ ու տեղին օգտագործման հետ: Այն, ինչ աշակերտներն անցել են նախորդ դասերին կամ ուսման նախորդ տարիներին, հետևողականորեն պետք է կրկնվի, ամրապնդվի, դառնա կարողություն, հիմք ծառայի նորի յուրացման համար և կապվի նորի հետ: Սա ուսումնական պրոցեսի գիտական կազմակերպման հիմնական պահանջ պետք է լինի և հետևողականորեն պահպանվի մայրենի լեզվի բոլոր դասերի ընթացքում:

Միջառարկայական կապերի օգտագործման մյուս կարևոր եղանակը, որը նույնպես լայն գործադրություն պետք է ստանա մայրենի լեզվի դասերին, ձեռքբերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումը պետք է լինի ուսուցման պրոցեսում: Սա նույնպես աշակերտի ունեցածի, նրա ձեռբերածի և կուտակածի ճիշտ, նպատակահարմար ու արդյունավետ օգտագործման պահանջն է՝ գիտելիքների ու կարողությունների բնագավառում: Երրորդ ձևը այլ գիտությունների տվյալների կիրառությունն է,որը նույնպես լայնորեն կարող է գործադրվել ուսուցման պրոցեսում:

Երեխաներին պետք է սովորեցնել շրջապատի աշխարհում տեսնել ու գնահատել գեղեցիկը, լավն ու բարին և գնալ այդ ճանապարհով, նվիրվել աշխարհի ու մեր կյանքի գեղեցկացմանը: Իսկ դրա համար տարրական դասարանների մայրենի լեզվի դասերը լայն հնարավորություններ են ստեղծում,որովհետև այդ դասերն իրենց մեջ ամփոփում են արվեստի տարբեր ձևերի,գիտությունների,տեխնիկայի ու տարաբնույթ այլ հարցերի վերաբերյալ եղած տարրական տեղեկությունները: Այս առումով մայրենի լեզվի դասերը

կարելի է դարձնել հարուստ, բազմակողմանի ու բազմաբնույթ, աշակերտներին գաղափար տալ արվեստի տարբեր ձևերի,տարբեր գիտությունների, մարդկանց ու պատմողական իրադարձությունների մասին:

Այսպիսով՝ տարրական դասարաններում մայրենիի դասերին կիրառվող միջառարկայական կապերն ունեն աշխարհաճանաչողական բնույթ և նպաստում են անձի համակողմանի զարգացմանը:

Միջառարկայական կապերի միջոցով կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացումը

Երեխաների ընդհանուր զարգացումն ապահովելու համար ոչ միայն նրանց մեջ լավ կարդալու, գրելու և խոսելու կարողություններ պետք է ձևավորել, այլև բազմապիսի աշխարահաճանաչողական տեղեկություններ պետք է տալ, սովորեցնել աշխարհում տեսնել ու գնահատել գեղեցիկը, լավն ու բարին և գնալ այդ ճանապարհով, նվիրվել աշխարհի ու մեր կյանքի գեղեցկացմանը: Իսկ այս ամենի համար պետք է մայրենիի դասերը դարձնել խորապես ճանաչողական ու դաստիարակչական,այն պետք է հարստացնել անցած գիտելիքներն ու կարողություններն անընդհատ կրկնելով, նորի հետ կապելով, շրջանառության մեջ պահելով, որպեսզի աշխարհի մասին երեխաների ստացած հատուկտոր, առանձին ու անկախ գիտելիքները կապվեն միմյանց հետ, լրացնեն միմյանց և դառնան մեկ ամբողջություն: Ահա այստեղ էլ ուսուցչին օգնության են հասնում միջառարկայական կապերի կիրառումը, որոնք ոչ միայն հետաքրքիր ու ճանաչողական են դարձնում դասերը, այլ նաև դառնում են կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման միջոց: Այս առումով մայրենի լեզվի դասերը կարող են լայն հնարավորություններ ստեղծել, որովհետև այդ դասերն իրենց մեջ ամփոփում են տարբեր ձևերի, գիտությունների, տեխնիկայի ու տարաբնույթ այլ հարցերի վերաբերյալ եղած տարրական տեղեկությունները:

Կերպարվեստը տարրական դասարանների մայրենիի դասերին

Միշտ էլ հայ մեթոդական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվել մայրենի լեզվի դասերին նկարների և նկարչության տարրերի կիրառմանը: Դրա անհրաժեշտությունը բացատրվում է երկու նկատառումով. գեղագիտական ճաշակի մշակումը և խոսքի զարգացումը, որոնք այսօր էլ մայրենի լեզվի ուսուցման հիմնական խնդիրներն են և որոնք էլ

հիմք են հանդիսանում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման համար: Ամենից առաջ ու ամենից շատ դասագրքերում տեղ գտած նկարները դրանց գեղարվեստական ձևավորման նպատակ են հետապնդում, իսկ ապա նաև ճանաչողական, այս կամ այն տեղեկության, նյութի ու գաղափարի հաղորդման: Այս առումով դրանց հիմնական խնդիրը երեխաների մեջ գեղարվեստական ճաշակի մշակումը, գեղագիտական դաստիարակության կարևոր պահանջի իրականացումը պետք է լինի: Հետևաբար՝ դասագրքերում, առանձնապես տարրական դասարանների դասագրքերում զետեղված նկարներրը պետք է խորապես գեղարվեստական, գրավիչ ու ճաշակավոր լինեն, բավարարեն ժամանակի գեղագիտական պահանջը, լինեն մատչելի, բնական ու երևակայությունը զարգացնող:

Բավականաչափ նկարներ են օգտագործվում նաև մայրենի լեզվի ընթերցարաններում, որտեղ դրանք երբեմն նյութի այս կամ այն կարևոր փուլի իլյուստրացիա են կամ նյութականացում, իսկ երբեմն էլ որպես գեղարվեստական նկարների վերտադրություններ, որոնց նպատակը գեղարվեստական ճաշակի մշակումը, կերպարվեստի նշանավոր գործիչների ու նրանց գործերի մասին մատչելի տեղեկությունների հաղորդումն է:

Այսպիսով՝ մայրենիի և կերպարվեստի միջառարկայական կապը հանդիսանում է կրտսեր դպրոցականի ինքնուրույն մտածողության, ստեղծագործական կարողությունների, բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման միջոց:

Երգն ու երաժշտությունը տարրական դասարանների մայրենիի դասերին

Դեպի գեղեցիկի աշխարհը երեխաների համար ճանապարհ պետք է հարթել բոլոր միջոցներով, բոլոր առարկաների դասերին: Մայրենիի դասերն այդ տեսանկյունից մեծ առավելություն և մեծ հնարավորություն ունեն ոչ միայն այն առումով, որ ամեն ինչի մասին մայրենի լեզվով կարելի է հեշտությամբ բացատրել ու հասկացնել, այլև այն տեսանկյունից, որ մայրենիի դասերին արվեստի տարբեր ձևերի և դրսևորումների տեղին ու արդյունավետ գործադրումը ոչ մի դժվարություն չի ներկայացնում: Գեղեցիկի աշխարհը թափանցելու այդ կարևոր ու անփոխարինելի միջոցներից մեկն էլ երգն ու երաժշտությունն են, որոնք լայնորեն կարող են օգտագործվել մայրենիի դասերին, դառնալ այդ դասերի բաղկացուցիչ մասերից մեկը, մայրենիի դասը դարձնել հաճելի, գեղեցիկ, տպավորիչ և անմոռաց: Ուսուցիչը պետք է կարողանա հմտորեն , տեղին և արդյունավետ օգտագործել երգն ու երաժշտությունը: Օրվա դասերը երաժշտությամբ

ամփոփելը կամ ավարտելը բացառիկ կարևոր նշանակություն կարող է ունենալ ոչ միայն երեխաների հոգնածությունը ցրելու, նրանց աշխուժացնելու և ակտիվացնելու, այլև անցածը ամրապնդելու տեսանկյունից: Սրան ևս հատուկ տեղ և արժեք պետք է տալ ոչ միայն մայրենիի, այլև տարրական դասարաններում դասավանդվող ուսումնական տարաբնույթ աշխատանքների համակարգում: Թե ինչպիսին պետք է լինի այդ երաժշտությունը, ինչ բովանդակություն, կատարում և տևողություն պետք է ունենա, կարելի է լուծել մասնագետ ուսուցչի հետ, բայց որ այն անպայման հսկայական և անփոխարինելի նշանակություն կարող է ունենալ աշակերտների ոչ միայն գեղագիտական դաստիարակության, այլև ուսումնական աշխատանքների արդյունավետության բարձրացման համար, սա միանգամայն կասկածից դուրս է: Նման երաժշտությունը պետք է հոգեհարազատ լինի երեխաներին, համապատասխան հույզեր և զվարթ տրամադրություն ստեղծի:

Թեև երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, իր հսկայական ու անփոխարինելի նշանակությունն ունի երեխաների մեջ բնականորեն եղած երաժշտական ընդունակություններն ու հակումները բացահայտելու և զարգացնելու, որոշակի երաժշտական կարողություններ ձևավորելու համար, սակայն այդ կարողությունները միայն երաժշտության դասերին չէ, որ պետք է դրսևորվեն, դրանք իրենց միանգամայն գործնական ու խիստ օգտակար գործադրությունը պետք է ունենան նաև մայրենիի դասերին: Այստեղ այն կկապվի հատկապես այն նյութերի մշակման հետ, որոնք օգտագործված են երաժշտության մեջ, որպես լեզվական հենք կամ կապվում են երաժշտության հետ, նոր տեղեկություններ ու գիտելիքներ են տալիս երաժշտության, երգի ու երգահանների մասին, նպաստում են այդ ուղղությամբ երեխաների մտավոր զարգացմանն ու գեղագիտական դաստիարակությանը: Այսպես, օրինակ, մայրենիի դասագրքերում բազմաթիվ մանկական բանաստեղծություններ կան, որոնք երգահանների կողմից օգտագործվել են մանկական երգերի համար որպես խոսքային հենք: Այսպիսի նյութերի ուսումնասիրությունն անպայման պետք է կապվի տվյալ երաժշտական ստեղծագործության օգտագործման հետ, որը մի դեպքում կհարստացնի տվյալ նյութի վերաբերյալ տրվելիք տեղեկությունները, մյուս կողմից կբարձրացնի նրա հուզական-արտահայտչական ազդեցությունը, կնպաստի յուրացման մակարդակի բարձրացմանը: Շատ հաճախ կարելի է նյութի ուսումնասիրությունն սկսել նրա երաժշտական կողմի

ունկնդրումով, որը ոչ միայն լավ տրամադրություն կստեղծի, այլև կբարձրացնի երեխաների հետաքրքրությունը նյութի նկատմամբ:

Այսպես, օրինակ, եթե տվյալ տեքստն արդեն ուսումնասիրվել է որպես երգ, և երեխաները գիտեն այդ երգը, շատ լավ կլինի աշակերտներին կատարել տալ այն, իսկ ապա ասել, որ այդ երգի տեքստն ուսումնասիրվելու է որպես ընթերցանության նյութ՝ նրա բովանդակությունը, թեման ու լեզվական կողմը, արվեստն ու մյուս առանձնահատկություններն ավելի լավ ճանաչելու առումով:

Այսպիսով՝ երգի և մայրենիի միջառարկայական կապը նպաստում է կրտսեր դպրոցականի գեղեցիկի աշխարհ ներթափանցելուն, դասի հանդեպ հետաքրքրության ավելացմանը, ինչպես նաև բառապաշարի հարստացմանն ու խոսքի գեղեցկացմանը:

Մաթեմատիկան տարրական դասարանների մայրենիի դասերին

Մաթեմատիկան երեխային իրական կյանքի հետ կապելու լրացուցիչ հնարավորություն է ընձեռում: Այս առարկայի գործնական իմացությունը օգնում է երեխաներին իրենց գիտելիքները կիրառել նոր իրավիճակներում: Տեքստային խնդիրներն իրենց բովանդակությամբ ոչ միայն սոսկ մաթեմատիկական հաշվարկ կատարելու նպատակ են հետապնդում, այլև դրանք միջոց են միջառարկայական կապերի ապահովման և երեխաների համապիտանի կարողությունների զարգացման համար:

Կապը մաթեմատիկայի հետ- Երեխաներին տրվում է երկրաչափական պատկերների հավաքածու, որի մեջ կա եռանկյուն, շրջան, քառակուսի, յուրաքանչյուրից՝ մեծ, միջին և փոքր, ինչպես նաև յուրաքանչյուր ձևից՝ երեք գույնի: Տալ խմբավորման տարբեր առաջադրանքներ, ասենք՝ խմբավորել բոլոր կապույտ եռանկյունները և ներկայացնել դրանց տարբերությունները: Կամ խմբավորել բոլոր կանաչ պատկերները և ներկայացնել:

Միջառարկայական կապերի դերը մաթեմատիկայի դասերին

Ներկայումս արդիական է գիտությունների ինտեգրացիան, աշխարհի ընդհանուր պատկերի մասին առավել ճշգրիտ պատկերացում ստանալու ձգտումը: Այդ գաղափարներն արտացոլում են գտնում ժամանակակից դպրոցական կրթության հայեցակետում: Բայց անկարելի է մեկ ուսումնական առարկայի շրջանակներում լուծել այդպիսի խնդիր: Ուստի ուսուցման տեսությունում և պրակտիկայում օգտագործում են միջառարկայական ընդհանրացումներ: Մաթեմատիկայի՝ ուրիշ առարկաների հետ ինտեգրված դասերն ունեն վառ արտահայտված կիրառական ուղղվածություն, թույլ են տալիս սովորողներին ցուցադրել մաթեմատիկայի կիրառման տարբեր բնագավառները, դրանով բարձրացնել այս դիսցիպլինն ուսումնասիրելիս նրանց մոտիվացիան: Միջառարկայականության օգտագործումը նպաստում է սովորողների մտածողության, ինքնուրույնության, ճանաչողական և ստեղծագործական ակտիվության զարգացմանը:

Մաթեմատիկայի դասերին միջառարկայական կապերի կիրառումը հանդիսանում է մաթեմատիկայի ուսուցման կիրառական ուղղվածությանը հասնելու կարևոր միջոց: Մաթեմատիկայի օբյեկտը ողջ աշխարհն է, և այն ուսումնասիրում են բոլոր մյուս գիտությունները: Միջառարկայական կապերը պետք է դիտարկել ոչ միայն որպես «կամրջակներ» տարբեր ուսումնական առարկաների միջև, այլև որպես ուսուցման ամբողջական համակարգի կառուցում գիտական իմացության մեթոդների և գիտելիքների բովանդակության ընդհանրության հիման վրա: Միջառարկայական կապերի իրականացումը դպրոցում կարևոր դիդակտիկական խնդիր է, բխում է սիստեմատիկության դիդակտիկական սկզբունքից: Նման կապերի հնարավորությունը պայմանավորված է նրանով, որ մաթեմատիկայում և կից դիսցիպլիններում ուսումնասիրվում են նույնանուն հասկացություններ:

Միջառարկայական կապերի ներգրավումը բարձրացնում է ուսուցման գիտականությունը, մատչելիությունը, տեսությունը հագենում է պրակտիկ բովանդակությամբ:

Պատմականության տարրը մաթեմատիկայի ուսուցման մեջ յուրաքանչյուր առանձին փաստ է, որն անմիջական առնչություն ունի մաթեմատիկայի պատմությանը (կենսագրական տեղեկություն, սկզբնաղբյուրի մեջբերում, մաթեմատիկոսների դիմանկարների ցուցադրում և

այլն): Մաթեմատիկական խնդրում պատմականություն տեղի ունի այն դեպքում, երբ խնդրի պայմանին ավելացվում է պատմական փաստ:

Պատմական տեղեկությունների այս օրինակներով ցույց է տրվում, թե ինչպես են մաթեմատիկական գիտելիքներն ի հայտ գալիս մարդու պրակտիկ պահանջներից և այնուհետև օգտագործվում պրակտիկ խնդիրների լուծման համար:

Անդրառարկայական կապեր

Սա վերաբերում է այն ուսումնական ծրագրերին, որը դուրս է առարկաների սահմաններից: Այս ինտեգրումն առավել համապարփակ է և այս դեպքում լիովին ջնջվում են առանձին առարկաների սահմանները: Նման ինտեգրում է տեղի ունենում, օրինակ, նախագծային ուսումնառության դեպքում, երբ սովորողները հետապնդում են կոնկրետ խնդիր, որը լուծելու համար կարող են անդրադառնալ համալիր մեթոդների՝ վերանալով առանձին առարկաների սահմաններից: Օրինակ, ենթադրենք՝ տրված է առաջադրանք ուսումնասիրել տվյալ համայնքի բնապահպանական իրադրությունը: Նման ձևով ուսումնասիրությունն իրականացնելիս ոչ թե թեմա առ թեմա անցնում են, օրինակ հողի կառուցվածքը, օդի բաղադրությունը, քիմիական ու ֆիզիկական մի շարք երևույթներ, կատարում անհրաժեշտ մաթեմատիկական հաշվարկներ և տնտեսագիտական վերլուծություններ, այլ ուսումնասիրում են, թե ինչու են աղտոտված հողը, օդը, ինչպիսին կարող էր լինել դրանց բաղադրությունը բնականոն զարգացման դեպքում, որոնք են բացասաբար անդրադարձող հանգամանքները, ինչ կարելի է անել իրավիճակի շտկման համար, ինչպիսի տնտեսական հետևանքներ կունենա այն և այլն:

Վերը թվարկված յուրաքանչյուր մոտեցում ճանաչողական (իմացաբանական) մի նրբերանգ է կարևորում և յուրովի է պատասխանում այն հարցին, թե ինչն է կարևոր իմանալ:

Ինտեգրման նշված ձևերից յուրաքանչյուրն ունի ուղենիշային ընդհանուր պատկերացումների իր շրջանակը՝ վերջնարդյունքին հասնելու համար:

Եզրակացություն

Կատարված հետազոտությունների և դիտարկումների արդյունքների ամփոփմամբ կարելի է հստակեցնել մի քանի եզրակացություններ, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները: Պլանավորելով կրթական գործունեության արդյունքները, կրթության որակը իրականացվել է կրթական գործունեության վերլուծության հիման վրա: Վերլուծությունը պետք է հաշվի առնի ինչպես դրական, այնպես էլ բացասական գործոնները, վերլուծության արդյունքը հետադարձ կապն է ուսումնական գործընթացից: Ուսումնական գործընթացի ուղղումն իրականացվել է ուսուցչի մեթոդական աշխատանքի, տարբերակման՝ ըստ իրենց կարողությունների, գիտելիքների որակի, սովորելու կարողության, միջառարկայական առաջադրանքների բնույթի: Կրթության որակի ուսումնասիրման մեթոդները՝ հարցումը, հարցաքննությունը, թեստավորումը և այլն, հնարավորություն տվեցին վիճակագրական նյութ ստանալ ուսումնասիրությունից:

Սովորողների հարցումն իրականացվել է տարբեր ձևերով՝ ինքնուրույն աշխատանք, բանավոր պատասխան, գրատախտակի մոտ խնդիր լուծել, տնային առաջադրանք, հսկիչ աշխատանք: Ուսուցման արդյունքների վերլուծությունն իրականացվել է մոնիտորինգի հիման վրա՝ պարզելու ուսուցման մի քանի չափանիշներով՝ գիտելիքների որակ, կրթական առաջադրանքների կատարման անկախություն, սովորելու կարողություն, ուսուցման գործունեությանը ստեղծագործ մոտեցում, գիտելիքների որակի բարձրացում: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ միջառարկայական ինտեգրման ներդրումը կրթական գործընթացում միջառարկայական առաջադրանքների հիման վրա բարելավում է կրթության որակը :

Ժամանակակից կրթության խնդիրներն են՝ սովորեցնել սովորել, ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, ստեղծագործաբար մոտենալ մասնագիտական գործունեությանը, և անհնար է դրանք լուծել տեղեկատվական հասարակության մեջ՝ առանց ինֆորմատիկա և համակարգչային տեխնոլոգիաներ ուսումնասիրելու: Այս առարկաների ուսուցումը պետք է իրականացվի միջառարկայական առաջադրանքների համակարգի հիման վրա, որը համապատասխանում է դպրոցական դասընթացի առարկաների բովանդակությանը և արտացոլում է ուսման իրական խնդիրները: Համակարգչային առարկաները դպրոցում ուսուցման գործընթացի համակարգային բաղադրիչ են, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաները ներդրվել են գործունեության բոլոր ոլորտներում, և ժամանակակից հասարակության տեղեկատվականացումը ձևավորում է մասնագիտություններ, որոնցում համակարգիչը անհրաժեշտ գործիք է: Տարբեր ձևերով իրականացվող միջառարկայական առաջադրանքներ, Կրթական գործընթացում միջառարկայական առաջադրանքների ներդրումը հնարավոր է կրթության հումանիստական անհատականության վրա հիմնված պարադիգմի ներդրման պայմանով, որն ուղղված է ստեղծագործական, բարեգործական ուսումնական մթնոլորտի ստեղծմանը: Այս պարադիգմայի շրջանակներում անձը ձեռք է բերում գիտական գիտելիքների համակարգ, գործնական հմտություններ և մտավոր և ճանաչողական գործունեության զարգացման հարակից մակարդակ, բարոյական և գեղագիտական մշակույթ, որոնք որոշում են սոցիալական կերպարը և անհատական կրթությունը: Միջառարկայական կապերն ունեն կրթական, կրթական և մեթոդական գործառույթներ, որոնք թույլ են տալիս լուծել նախնական մասնագիտական ուսուցման, տարբերակված ուսուցման, վերապատրաստման և

կրթության համակարգչայինացման խնդիրները, ստեղծել ստեղծագործական մթնոլորտ և զարգացնել անկախության հմտություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս. և այլոք: «ՈՒսումնառությունն ու դասավանդումն կրտսեր դպրոցում»:
2. Նախաշավիղ/Գիտամեթոդական հանդես/ 2006թ:
3. Ա. Տեր-Գրիգորյան «Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին»
4. И.Д. Зверев «Взаимная связь учебных предметов»,М.:Знание,1977г.
5. П.И, Пидкасистый «Педагогика» М., «Педагогическое общество России»,1998 г.
6. Селевко Г.К. «Современные образовательные технологии», М., «Народное образование»,1998 г.
7. Федорец Г. Ф. Межпредметные связи в процессе обучения. – Нар. образование, 1985 г.
8. Федорец Г.Ф. Межпредметные связи и связь с жизнью–в основу обучения. – Нар. образование, 1979 г.

Բովանդակություն

Ներածություն……2

Միջառարկայական կապերի դերը մայրենիի դասերին……6

Միջառարկայական կապերի դերը մաթեմատիկայի դասերին……12

Անդրառարկայական կապեր……13

Եզրակացություն……14

Օգտագործված գրականության ցանկ……17

Դասի նմուշ-օրինակ 1

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ Երրորդ

Դասի թեման՝ «Ամենից լավ տունը»

Դասի նպատակը.

- Զարգացնել արտահայտիչ կարդալու կարողությունները
- Զանգացնել բանավոր խոսքը
- Հաղորդել հայրենի երկրի պատմության վերաբերյալ գիտելիքներ
- Օգնել ճշտելու աշակերտների վերաբերմունքն իրականության որոշակի փաստեր և երևույթների նկատմամբ
- Բառակազմական աշխատանք

Վերջնարդյունքներ.

- Աշակերտները արտահայտիչ կկարդան բանաստեղծությունը
- Կզարգանա աշակերտներ բանավոր խոսքը
- Գիտելիքներ կստանան հայրենի երկրի պատմության մասին
- Վերաբերմունք կդրսևորեն իրականության որոշակի փաստերի և երևույթների նկատմամբ
- Կկատարեն բառակազմական աշխատանք

Խաչվող հասկացություններ.

- Օրինաչափություն

- Պատճառ և հետևանք
- Մասշտաբ
- Անհատ և հարաբերություններ

Միջառարկայական կապեր- Կերպարվեստ, մաթեմատիկա, պատմություն, աշխարհագրություն

Անհրաժեշտ նյութեր.

- Ընթերցանության տեքստ
- Պատմական Հայաստանի քարտեզ, անկախ Հայաստանի քարտեզ

Դասի ընթացքը.

1. Խթանման փուլ

Աշակերտներին առաջարկում եմ թվարկել, թե ինչ գիտեն իրենք տան մասին.



2. Իմաստի ընկալման փուլ

Տեքստի բովանդակության շուրջ կանխագուշակման կարողությունների զարգացում՝ վերնագրի և հենակետային բառերի միջոցով: Այնուհետև առաջարկում եմ գուշակել, թե ինչի մասին է նյութը, գրել ենթադրություն: Ընդունում և խրախուսում եմբոլորի պատասխանները:

Կիրառում եմ «ՈՒղղորդված ընթերցանություն՝ կանգառներով» մեթոդը:

3. Կշռադատման փուլ:

Թղթի վրա նկարել իրենց երևակայական տունը և այնտեղ «տեղավորել» այնպիսի հասկացություններ, որոնք ավելի երջանիկ կդարձնեն այդ տան բնակիչներին:

Անդրադարձ:

Տնային հանձնարարություն- Անգիր սովորել բանաստեղծությունը, կատարել դասագրքից առաջադրանք 2-ը:

Դասի նմուշ-օրինակ 2

Առարկա՝ Մաթեմատիկա

Դասարան՝ Երրորդ

Դասի թեման՝ «Թվերի համեմատում»

Նպատակները.

- Տարբերակել եռանիշ թվերի սահմանում հարևան թվերը և հարևան կլոր տասնյակները
- Զարգացնել հավասարություններ կազմելու կարողություններ
- Հաշվել տարբեր գործողություններ պարունակող արտահայտությունների արժեքը

Վերջնարդյունքներ.

- Աշակերտները կտարբերակեն և կգտնեն հարևան թվերը

- ԿԿազմեն հավասարություններ՝ ըստ տրված գծագրի
- Կհաշվեն մի քանի գործողություն պարունակող արտահայտության արժեքը

Խաչվող հասկացություններ

- Օրինաչափություն
- Կայունություն և փոփոխություն
- Համամասնություն, քանակ

Միջառարկայական կապեր- մայրենի, ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա

Դասի ընթացքը

1) Խթանման փուլ

Անցկացվում է բանավոր հաշիվ: Տրվում է մաթեմատիկական թելադրություն:

2) Իմաստի ընկալման փուլ

Վերհիշում ենք երկնիշ և եռանիշ թվերի սահմանները:

Աշխատանք դասագրքով:

Ֆիզկուլտ դադար:

Առաջարկում եմ կատակ-գլուխկոտրուկներ, որոնք երեխաները գուշակում են մեծ ոգևորությամբ:

3) Կշռադատման փուլ

Աշակերտներին բաժանվում է մետաղալարեր, որոնցից նրանք պատրաստում են տարբեր չափերի բեկյալներ և հաշվում նրանց երկարությունը:

Տնային հանձնարարություն- առաջադրանք 46բ, 47բ:

Ամփոփում:

Դասի նմուշ-օրինակ 3

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը

Դասարան՝ Երրորդ

Դասի թեման՝ «Ընկերություն»

Նպատակներ.

- Հասկանալ, մտածել, քննարկել, թե ինչ է ընկերությունը
- Գիտակցել, թե ինչպես կարելի է պահպանել ընկերությունը
- Արտահայտել սեփական կարծիքը
- Տալ գնահատականներ

Վերջնարդյունքներ.

- Աշակերտները կհասկանան, կմտածեն, կքննարկեն թե ինչ է ընկերությունը
- Կգիտակցեն, թե ինչպես կարելի է պահպանել ընկերությունը
- Կարտահայտեն սեփական կարծիքը
- Կտան գնահատականներ

Խաչվող հասկացություններ

- Պատճառ և հետևանք
- Անհատ և հարաբերություններ

Միջառարկայական կապեր- մայրենի, երաժշտություն, կերպարվեստ

Դասի ընթացքը

1. **Խթանման փուլ**

Հնչում է «Ընկերություն» երգը: Ունկնդրելուց հետո դասարանը փորձում է կատարել երգը: Դասը սկսվում է խթանիչ հարցադրումներով:

2. **Իմաստի ընկալման փուլ**

Աշակերտները զույգերով պատասխանում են դասում զետեղված «Դիտի՛ր նկարները և ասա՛, թե որ նկարն է քեզ դուր գալիս և ինչու» հարցին: Ապա հանձնարարվում է ընթերցել դասը: Կիրառվում է «Կրկնակի գրառումների օրագիր» մեթոդը: Աշակերտները նշում են այն հատվածը, որը հիշեցրեց իրենց կյանքից մի դրվագ:

3. **Կշռադատման փուլ**

Աշխատանքը կատարվում է զույգերով: Առաջադրանքն է՝ մեկնաբանել դասի վերջում զետեղված նկարը:

Ամփոփում:

Տնային հանձնարարություն:

Կարդալ «Վատ ընկերը» պատմվածքը և բանավոր պատասխանել հարցերին: